## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**1980 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Նկատի ունենալով, որ սույն գործով զեկուցող՝ ՍԴ անդամ Ռ. Պապայանի՝ 11.03.2010թ. գրությամբ պահանջված՝ քննության առարկա կոնվենցիայի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածների հայերեն պաշտոնական տեքստերը սահմանադրական դատարան են ներկայացվել ոչ պատշաճ ժամկետում՝ տվյալ գործով նիստի օրը՝ 19.03.2010թ., որոնց ուսումնասիրության համար անհրաժեշտ է ՍԴ անդամներին տրամադրել լրացուցիչ ժամանակ, ուստի «1980 թվականի մայիսի 9-ին ստորագրված՝ Միջազգային երկաթուղային փոխադրումների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունը չսկսել, այն հետաձգել եւ սկսել 2010թ. ապրիլի 20-ին, ժամը 11.00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ — Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 մարտի 2010 թվականի
ՍԴԱՈ -24